



Ս Ե Վ Մ Ո Մ Ը

«Ո՛ր ի քուն երազ, և ո՛ր յարթութեան տե- սիլ»:



Այլ՝ հանկարծական վերազարթումն դառ- նակսկիծ հիշատակի մը մանկական...

«Խավարման գիշեր» մըն էր: Գիշեր «հիշա- տակի մատնութեան, շարժարանքի և խաշե- լութեան»:

Մայրս տարած էր զիս Տրապիզոնի մեր թաղի մոտակա Ս. Աստվածածին եկեղեցին: Բնմին վերև, սև վարագույրին վերեն՝ վար կախ տրված էր հսկա պատկերը՝ հաշելու- թյան: Մեծ աշտանակի մը վրա կպապակեր ու կպլպլար մոմի մը մեղրալույս լեզուն՝ լուսավորելով մեղրամոմն դիմագիծը բազ- կատարած և գլխահակ հաշլալին: Կին մը, ծունկի ինկած և հերարձակ, փարած հաշի պատվանդանին, կգալարվեր, կարտասվեր: Ուրիշ մը շնորհալի, սուգեն քարացած և քո- ղածածով՝ մյուս կողմը, և անոր կողն ի վեր երիտասարդ մը ակիլավոր, լույսը լճացած սիրո բերին մեջ:

Արևը խավարած և լուսինը նվաղած՝ իրենց լուռ հսկումը կկատարեն դեմ-դիմաց, հաշի դրամին մեջ բախտորոշ: Երկինք և երկիր երկունքի մեջ: Եվ անդին աքաղաղ մըն ալ՝ սևափետուր, կոկոզավիզ, այլ կարծես թևա- հարելի խոնջ ու թևաթափ և կտուցը կիսա- բաց: Խոսեր էր—կպատմեին հետո—երեք անգամ... Ի՛նչ էր խոսեր, ինչո՞ւ էր խոսեր. ի՛նչ դեր էր ունեցեր այդ եղբերգութեան մեջ,— իմ մանկական միտքը ոչինչ կարող էր հասկնալ, ոչինչ գուշակել:

Պատկերին առջև շարված էին տասներկու աշտանակներ: Տասնևմեկը սպիտակ մոմե- րով, իսկ մեկը՝ կուպրի նման սև: Աչքս հա- ռած էի անոր և մանրիկ ու միամիտ խո- կումներով պաղեցուցած: Հանկարծ լուսա- րարի կճատի բոցիկեն լույս-լեզու ելան

տասնևմեկ մոմերը, իսկ սևը մնաց անլեզու, անլույս: Ինչո՞ւ,— դարձյալ ոչինչ հասկցալ:

Ավետարան՝ մեկը ա՛յնքան երկար, երդ, շարական և քարոզ, բոլորն ալ թախծալից շեշտերով և մեկանուշ ողբաձայնությամբ,— խնկամանի մը մեջեն քուլա-քուլա վեր պողող կնդրուկի ոլորապտույտ ու մոլորահած մոլի ու ծուխերուն հետ,— կլեցնեին կամարն ու մթնոլորտը սգապատ տաճարին, պարուրե- լով ու շղարշելով նաև հաշն ու հաշլալը: Եվ իրենց ջերմ շունչով ու բարկ բուրումով կտամկացնեին ու կլճացնեին իմ ալ ման- կունի աչկումը՝ արցունքով: Ես ալ կխառ- նեի լացս՝ խուլ հեծկտանքներուն հետ մա- միկներուն, անշուշտ նաև մայրիկիս...

Ա՛հ, հաշլալին դե՛մքը... Սև Մո՛մը...

Եվ թմեր ու քնացեր էի...



Կես գիշեր էր՝ կծու, ցուրտ ու ցավագին: Երկար արարողությունները վերջ էին գտնի: Ես, մայրիկիս հետ վերադարձա տուն: Քնա- թաթախ՝ նետվեցա անկողին: Տարտամորեն կհիշեմ, թե մույլ երազներ խռովեցին գիշե- րի հանգիստս: Մանավանդ ծննդավայրի՝ Ամենափրկիչ վանքի որմանկարներուն կեռ- պոշ ու կոտորածովոր դեերու սև պարերու մե- ջեն այն սև մո՛մը շարալեզո՞ւ, անլո՞ւյս: Զարհուրած վեր ցատկեցի ընդոստ: Շփեցի շշմած աչքերս: Անէացած էր ուրումներու դիվադրամը: Բաց կմնար ստվերը սև մո- մին... «Մայր,— ըսի սարսուղափն,— այն մեկ մոմը ինչո՞ւ սև էր՝ անլեզու և անլույս»:

«Տղաս,— պատասխանեց մայրս, սրտաքանդ ա՛խ» մը քաշելով և քնքշորեն մազերս շո- յելով,— ան Հուդա՛ն էր, դավաճա՛նը, սև- լեզու մատնի՛լը իր Վարդապետին, այն հաշ- յալին...»: Պիշ-պիշ ու լուռ՝ նայեցանք պահ մը իրարու...

Սև Մո՛մը... մատնի՛լը...



Տարիներ հետո, այ պատանի խելահաս և ուսանող, գիտելի պատմությունը այս սրբազան դրամին: Սրբազնացած, այո, — եղբերական լույս-դեմքով: Վերլուծել էի, որ-բան կրնայի, հոգին Սև Մոմին: Կետի մը վրա բեռնացուցել էի մտածումս: Այդ մոմի անբեռնացուցելի խելահեղորեն հեղձարոց պատույզեն՝ խելահեղորեն հեղձարոց մղձուկ և հուսահատ ձայն մըն էր լսվել, — «Մեղա՛յ, դի մատնեցի զարիւն արդար...»:

Մրճացած խղճին զի՛ղջը... Այ ո՛ւշ էր... Մատնիչ արծաթը նետված էր Տաճարի հատակին վրա, երեսն էի վեր քահանայապետներուն և ծերերուն: Բայց զի՛ղջի պարանը՝ անողոք՝ խեղդամահ ըրած էր զայն՝ մատնիչը եղկելի...:

Մնացած էր միայն «Ակեղղաման», «Արյան գլուղը»... Սև հիշատակը Սև Մոմին, սերունդն սերունդ...:

Ավելի քան յոթնասուն տարիներ անցել էին այն օրեն ի վեր: Ալիքը փրփրածաղիկ եկել անցել էր իմ զառաքեն և իջել հանգ-չել էր մորվացս վրա: Եվ ահա հանկարծ մանկական այն հիշատակը կվերաճարթնի իմ հիշողությանս մեջ:

Խավարակուտ և «տղմասիգ-գուր»-ի մը խորեն «մեղքի շղթաներ»-ու մեջ զնգացող ուրու մը դուրս կցցել իր ցնորակոծ գլուխը և իր կարյա թևերուն դիվային ստվերը կպտտցնեն 48 աստիճանի բոլոր բոցերու տակ պանծացող երկրի մը վրա՝ Ազատության դրոշակիր: Ազա՛տ ասպարեզ—կերպեզ—սանձարձակության և սահմանազանցության:

Եվ մոռենտիկը մատնիչ, «Հայ Կաթողիկոսութենեն անջատված աղանդի մը հովիվը», «պետը» կպտուշտա, — «Հավա՛ր, «գործոնյա» շարին: «Էջմիածին» ոճրածի՛ն, Մայր Աթո՛ղավի բույնի թոր, Ամենայն Հայոց Հայրապետ՝ վալը ց կարապետ, աստվածակառույց Տաճար՝ «խողովա՛կ Սովետ Ռուսիո՛» ներթափանցելու Միջին Արևելքի եկեղեցիներուն», և այս՝ «նյութական օժանդակությամբ անոր»։ Հե՛յ, աշխարհի իշխաններ, արթընցե՛ք...:

Հազա՛ր, ե՛ն, հազա՛ր վայ և եղով քեզի, որ «քահանայապետարար» վարձեցիր 30 արծաթի՛ իսկական գործիքը Չարին, խավարի խորեն և դարձուցիր զայն Սև Մոմը մատնիչ՝ ժահրալեզու և անլույս...:

Պիտի ունենա՛ գոնե, հաղթականի ցնորածին ցինծեն հետո, ցունցը արթնցող՝ դիտակցության և զի՛ղջը խղճահարության, ոչ թե վատորեն դիմելով խեղդող պարանին, այլ հուսալից՝ Միածնի Իշման Ս. Սեղանին աստվածակառույց Տաճարին, ի կենդանության արժանանալով ներման մեր գորովագութ Մոր՝ Հայաստանյայց եկեղեցվո՛ւ:

Մի՛ մնար, մի՛, Սև Մոմը իմ մանկության, Սև Մոմը քու և մեր Տիրոջ...:

Գ. Ե. Տ.

(Կոստանդնուպոլիս, «ՇՈՂԱԿԱԹ», պաշտոնաբերք Ս. Խաչ դպրեվանուց Պատրիար-խության հայոց Թուրքիո, 1958 թ., փետրվար, № 2—3)

